

<i>Համարը</i>	ՀՕ-77-Ն	<i>Տեսակը</i>	Մայր
<i>Տիպը</i>	Օրենք	<i>Կարգավիճակը</i>	Գործում է
<i>Մկրտնադրումը</i>	ՀՀՊՏ 2015.07.08/42(1131) Հոդ.580	<i>Ընդունման վայրը</i>	Երևան
<i>Ընդունող մարմինը</i>	ՀՀ Ազգային ժողով	<i>Ընդունման ամսաթիվը</i>	19.06.2015
<i>Ստորագրող մարմինը</i>	ՀՀ Նախագահ	<i>Ստորագրման ամսաթիվը</i>	07.07.2015
<i>Վավերացնող մարմինը</i>		<i>Վավերացման ամսաթիվը</i>	
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	18.07.2015	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>	

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2015 թվականի հունիսի 19-ին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Աշխատանքային վեճերը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը, եթե աշխատողի և գործատուի միջև կնքվել է համաձայնություն, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված է վեճն արբիտրաժին հանձնելու հնարավորություն: Սույն օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային վեճերը կարող են հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը նույն հոդվածով սահմանված ժամկետում: Արբիտրաժային համաձայնությունը չի սահմանափակում աշխատողի աշխատանքային պայմանագրից բխող վեճը դատարան հանձնելու իրավունքը, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Մ. Սարգսյան

2015 թ. հունիսի 7

Երևան

ՀՕ-77-Ն